ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. Սինոդի անդամ Գերապատիւ Տ. Եփրեմ եպիսկոպոսը նուիրել է Մայր Տաճարին իր սեպհական եկեղեցական զգեստները

Ըստ այսմ.

1. Շուրջառ արծաթաթել կապտաւուն	մի	հատ
2. Փորուրար զառ դիպայ դեղին	մի	»
3. Եմիփորոն զառ դիպա կապոյտ	մի	»
4. Վակաս իր արտախուրակներով-ասեղնագործ	մի	»
5. Գօտի արծաթ ղիֆթիշի նշաձև	մի	»
6. Ղիւշակ պատարագչի բոլգարական կտաւ	մի	»
7. Շապիկ պատարագչի զառ խառայ	մի	»
8. Հողաթափ կարմիր թաւիշ, ասեղնագործ	մի	զոյգ
9. Թենոց (երիզագործ)	երեք	զոյգ (3 զ.)
10. Խաչ ձեռաց, արձանագրութիւնով, արծ.	մի	հատ
11. Քօղ սկուոյ կապոյտ	մի	հատ

Մուծելով տաճարի մատենում մուտք վերոյիշեալները, յայտնում եմ Նորին Սրբազնութեան իմ խորին շնորհակալութիւնը այդ նուէրի համար։

Այս մասին խնդրում եմ հրատարակել «Արարատի» մերձակայ համարում։

Մայր տաճարի Լուսարարապետ Ղեւոնդ եպիսկոպոս

1 յուլիսի 1913 ամի
Ս. Էջմիածին։

ԿՈՉ

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի և Կովկասի Տ. Փոխարքայի թոյլտուութեամբ առաջիկայ օգոստոսին Շուշում տօնուելու է Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական Դպրանոցի 75-ամեայ նշանակալից յօբելեանը. մինչև սեպտեմբերի 1-ը բացուած է հանգանակութիւն յօգուտ նոյն դպրանոցի։

Սրանով կենդրոնական յօբելենական Յանձնաժողովս

կոչ է անում հայ հասարակութեան բոլոր խաւերին և մանաւանդ մեր Ղարաբաղցի հայրենակիցներին սիրով արձագանք տալ առաջիկայ մեծ յոբելեանին և նիւթական ու բարոյական աջակցութեամբ նպաստել Սիւնեաց երկրի գիտութեան տաճարի յառաջադիմութեանը։

Ձենք կասկածում, որ գիտակից հայ հասարակութիւնը և մեր հայրենակիցներն, ոգևորուած առաջիկայ յոբելեանի մեծ նշանակութեամբ, սիրով ընդ առաջ կըգան բացուած հանգանակութեանը և իրենց սրտաբուղխ նուիրաբերութեամբ ընդմիշտ կապահովեն Ղարաբաղի մատաղ հայ սերնդի բարոյական, մտաւոր և ֆիզիքական դաստիարակութեան գործը։

Ղարաբաղի Թեմական Դպրանոցը, որ մինչև այսօր հայ ժողովրդին տուել է ականաւոր գործիչներ և բազմաթիւ զրաճանաչ անհատներ, որոնք գաւառական խուլ ու մութ անկիւններում մաքառել են տգիտութեան դէմ, այժմ Ղարաբաղի հոգատար բարերարների նուիրաբերութիւններով զօրացած այդ պատկառելի հիմնարկութիւնը աւելի ևս պիտի նպաստէ հայ մտաւոր զարգացմանը, լոյս ու գիտութիւն տարածելով իր չորս կողմը։

Զանազան վայրերի հասարակական հաստատութիւնները շէն ու պայծառ պահող մեր բարեգործ հայրենակիցները պիտի շտապեն օգնելու իրենց սիրած հայրենիքի գիտութեան մայր տաճարին, որով և անջնջելի կպահեն իրենց յիշատակը հայ սերունդների երախտագէտ սրտերում։

Նուէրներ, ուղերձներ, հեռագրեր և այլ գրութիւններ ուղարկել հետևեալ հասցէով՝

Шуша, попечительству Армянской Духовной Семинаріи

Յոբելեանի հանդէսը նշանակուած է սոյն տարուայ օգոստոսի 10-*ին եւ* 11-*ին։*

Նախագահ՝ Զաւէն վարդապետ

Քարտուղար՝ Դր. Ղարագեօզեանց:

1 յուլիսի 1913 թ.
Շուշի։